ԱՐԱՐ ՅԻՆԳԵՐՈՐԴ

ՔԱՋ ՆԱԶԱՐԻ ՎԵՐՁԸ

Նոյն պալատական սրահը

ՆԱԶԱՐ.– (Բազմած է թախտին. Սաքո՝ նրա հետեւը բռնել է դրօշակը։ Նազիր—վեզիր, զօրավարներ, պալատականներ, տէրտէր, թամադա, Ղռռոբուղա եւ միւս հսկաները կանգնած են Նազարի դիմացը եւ երկիւղած՝ սպասում են նրա խօսելուն։ Լռութիւն։ Սպասաւորները՝ Սենեկապետի առաջնորդութեամբ, խնկամանները, ձեռներին մտնելով ներս, զանազան ձեւերով խնկարկում են Նազարին եւ ապա Սենեկապետի հետ զգոյշ, ակնածութեամբ դուրս են ելնում։ Նազարը մտախոհ՝ համրիչ է գցում եւ իր մէջ բաներ է ապրում։ Շատ լուրջ եւ կարեւոր վճիռների առջեւ է, ձեւերն արտասովոր են, հազում է եւ սկսում։) Ինձ նայէք, գեադէ՛ք։ Ձեզ հրաման պիտի տամ ու թագաւորական խօսքս պիտի ասեմ։ Շատ կռիւների մէջ եղա, շատ կռուեցի ու շատ յաղթեցի։ Էս վերջին մեծ կռուից էլ, փառք աստծու, տեսաք, որ էլի յաղթող դուրս եկանք։ Գեադա, էս ի՞նչ բաներ են, գեադա՞, էս ինչ նշանակ է, էս ի՞նչ տուրք է, գեադա՞։ Էս էն տուրքն է, գեադա՛, էս էն օրէնքն է գեադա՛, ես տեսնում եմ, գեադա, որ աստծու մատը խառն է էս ամենի մէջ։ Ու աստծու օրէնքի մէջ էդպէս էլ յատուկ ինձ համար գրած է, որ ամեն անգամ ես պիտի յաղթեմ։

ՏԷՐՏԷՐ.– Վկա է աստուած կենդանի։

ԲՈԼՈՐԸ.– (Խոնարհւում են ի նշան խորին երկիւղածութեան։)

ՆԱԶԱՐ.– Ու հիմի, գեադէք, ահա ես իմ բերնով հրամանք եմ անում ձեզ, որ իմ ցեղս սուրբ է, իմացիր, գեադա, որ ժողովուրդը ինձ համար է ծնւում, ինձ համար ապրում, ինձ համար մեռնում։ Ժողովուրդը պիտի աշխատի, ես ուտեմ։ Դրա համար էլ ուզում եմ, որ սրբերի դասը դասուեմ։

ՏԷՐՏԷՐ.– Եղիցի՛, եղիցի՛ եւ եղիցի՛։

ԲՈԼՈՐԸ.– (Երկիւղածութեամբ խոնարհւում են։)

ՆԱԶԱՐ.– Հիմի ինձ նայէք, գեադէք։ Մինչեւ հիմի աստուած էր օգնում ինձ, հիմի իմ գործը ես իմ ձեռքով պիտի տեսնեմ։ Հիմի ես ամենքին կյաղթեմ։ Իրա համար էլ, գեադէք, հիմի ես ուզում եմ, որ ողջ աշխարհը գցեմ ոտիս տակ։ Ինչացո՞ւ է էսքան տէրութիւնն ու թագաւորը։ Ես հերիք եմ։